



Արհեստական անձրև առաջացնելու համար ամպերում փոշեցրում են արծաթի յոդիդ, պինդ ածխաթթու կամ դարձյալ ինչ-որ նուկլեացնող (այդպես են կոչվում մընոլորտում ջրային գոլորշիների խտացման կենտրոններ առաջացնող նյութերը): Ամպերը խտանում են և անձրև դարձած թափում ցած: Այդպես է վերացվում ամպամածությունն ու մառախուղը օդանավակյացաններում:

Դա պահանջում է մեծ քանակությամբ նուկլեացնողներ, որոնք սակայն անկայուն են, օգտագործման տեսակետից անհարմար, թանկ են և այդ բոլորից բացի ազդում են որոշակի պայմաններում: Ահա թե ինչու արհեստական անձրևը գյուղատնտեսության մեջ լայն կիրառում չգտավ:

Այդ թերություններից պատճորեն պերծ է մետալիդենիդը՝ բավական պարզ և զաղուց հայտնի քիմիական միացությունը: Վերջերս այն կիրառել է Նագոյի համալսարանի (Ճապոնիա) գիտնականն Նորիիխիկո Յուկուտան: Գիտնականը Ավստրալիայի պետական ռադիոֆիզիկայի լաբորատորիայի (Սիդնեյ) աշխատակիցների հետ համատեղ փորձեր է անցկացրել Ավստրալիայի չորային շըրշաններում: Ի տարբերություն մյուս նուկլեացնողների մետալիդենիդը չի վախենում արևից: $+55^{\circ}$ ջերմության դեպքում այն մի ժամ պահում է իր ուժը, իսկ մինչև $+31^{\circ}$ -ը առհասարակ կայուն է, այն դեպքում, երբ, օրինակ, արծաթի յոդիդը չի դիմանում 25° -ին: Մետալիդենիդը հատկապես ակտիվ է այնպիսի եղանակներին, երբ անձրևները հազվադեպ են տեղում:

Ավստրալիացիները հուսով են, որ այսուհետև կարող են ստանալ էժան անձրև:

ՈՒՍՈՒՄՆԱՑԻՐՎՈՒՄ Է ԴԵԼՖԻՆՆԵՐԻ «ԼԵԶՈՒ»

Օգտվելով խոսքն ըմբռնելու բարդ օպտիկական սիստեմով, որը «Սցեպտրոն» անունն է կրում, գիտականները փորձում են հաղորդակցության մեջ մտնել դելֆինների հետ: Արտաքին աշխարհի հետ մարդու կազմն ընդլայնելու վերաբերյալ այս նոր խնդրի մասին գրույցը, որն ուղեկցվեց համապատասխան հնարքների ցուցադրմամբ, տեղի ունեցավ բժշկության և կենսարանության մեջ տեխնիկայի կիրառմանը նրա վիրված 16-րդ ամենամյա կոնֆերանսում: Կոնֆերանսն անցկացվեց Բալտիմորում (ԱՄՆ): Դելֆինների «լեզվի» ուսումնասիրման մասին հաղորդեցին

Սպեռնի ֆիրմայի (Նյու-Յորքի նախանգ) աշխատակիցներ Բալանդիսը և Ռենդը:

Հստ երանց, արդեն երկար ժամանակ հայտնի է, որ դելֆինները բավականին խելամիտ կենդանիներ են և ունեն սեփական «լեզու»: Դոկտոր Լիլիի կատարած աշխատանքները ցույց են տվել, որ դելֆինները ազդանշանում են իրար կերի, ստորշյա խոշընդուների մասին, և բացի այդ, ընդունակ են նմանակելու մարդու ձայնը: Դոկտոր Լիլին կարծում է, որ դելֆինների հետ ազդանշանների փոխանակումը—այլ տեսակի հակենքի հետ մարդու առաջին շփոմը—կարող է ունենալ էվոլյուցիոն բնույրի՝ հեռուն զնացող հետևանքներ:

Դելֆինների «լեզուն» ուսումնասիթը բերու համար կիրառվել է «Սցեպտ-ռուն» անունը կրող մի փոքրիկ սարք: Այդ սարքը ազդանշանը փոխակերպում է անհատականացված լուսանախչի, որն անմիջականորեն համապատասխանում է ազդանշանի հանախականության սպեկտրին: Լուսանախչը լուսանկարվում է ապակե դիմապոզիտիվի վրա, որը հիշող սարքի դեռ է կատարում: Այլ հանախականություններ ունեցող ազդանշանները կտուն այնպիսի լուսանախչ, որը չի համապատասխանի սարքում տրված լուսանախչին: Դելֆինների ազդանշանների անընդհատ համեմատությունը դիմապոզիտիվների վրա դրոշմված ազդանշանների հետ կատարվում է ֆոտոէլեմենտների միջոցով:

Չայնային հանախականությունների սպեկտրը լուսանախչի է փոխակերպվում կվարցի մանրաբեկերից պատրաստված մամլամայրի օգնությամբ: Լույսը տարածվում է այդ մանրաբեկերով, որնք ունեն տարբեր, բայց խիստ որոշակի երկարություն, որի շնորհիվ յուրաքանչյուր մանրաբեկի տատանման հանախականությունը տարբեր է: Մի կողմում մանրաբեկերի ծայրեն ամրացված են, իսկ մյուսում կառող են ազատ տեղաշարժվել:

Եթե մանրաբեկային այդ մամլամայրն ամրացնենք էլեկտրամեխիսանիկական փոխակերպիչին և վերշինս գրգռուենք ձայնային հանախականության ազդանշաններով, մանրաբեկերը կըսկըսն տատանվել տվյալ ազդանշանին բնորոշ կերպով: Քանի որ յուրաքանչյուր մանրաբեկով լույս է հաղորդվում, տատանումները կապակերպվեն մանրաբեկերի ծայրերով առաջցող լուսանախչի տեսով:

Վուդս-Հոլի օվկիանոսագիտական փինստիտուտում գրի են առնվել

դելֆինների ազդանշանային ձայնները: Սովորաբար նրանց ձայնը սկսվում է 10 կիլոներց հանախականությամբ, որն այնուհետև, նվազում է մինչև 5 կիլոներցի և նորից հասնում է մինչև 10-ի: Այդպիսի ձայնը տևում է 0,1 վայրկյան: Ազդանշանը բաղկացած է իրար արագորեն հաջորդող մի բանի հման ձայններից: Այդ ձայնները մարդուն ավելի պարզորոշ դարձնելու համար դրանց տեղորոշումը 4 անգամ երկարաձգում են:

Գրանցված ազդանշանները հանձնել են «Սցեպտռոնին», որի 350 մանրաբեկերից մոտավորապես 70-ը ուզոնանս է տվել:

Ըստ Սպեռի ֆիրմայի ներկայացուցիչների, հաջորդ բայլը պետք է լինի այն, որ մարդիկ «Սցեպտռոնի» օգնությամբ ստացված ձայնագրություններն օգտագործելով ուզեն էտալոններ, փորձեն նմանակել դելֆինների արձակած ձայնները: Այնուհետև նմանակումից ստացված ձայններն անհրաժեշտ է ձայնագրել և վերարտադրել դելֆինների համար:

Կարելի է նաև փորձել դելֆիններին որոշ բառեր սովորեցնել: Այդ նպատակով տեսանելի պատկեր տվող «Սցեպտռոն» պետք է միացված լինի դելֆիններին խրախուսող սարքին, որը բյունիկներ «պարզելի» նրանց: Նման սիստեմը կարող է «շահագրգուել» դելֆիններին նմանակելու բառերը:

Հաջորդ փուլը գուցե լինի «դելֆինների լեզվի բառարան» կազմելը Այդ դեպքում «Սցեպտռոն» կարող է բարգանջի դեռ կատարել, մարդու արտարերած համապատասխան բառի դիմաց բառացանկից բնորելով որոշակի ազդանշան:

Վերջնանպատակը, հասկանալի է պետք է լինի մարդու և դելֆինի միջև երկկողմանի հաղորդակցությունը: